Հաստատված է

«ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ի Վարչության

07/07/2026թ.-ի որոշումով

AMIO Pro փաթեթ ունեցող կամ ակցիայի շրջանակում AMIO Pro փաթեթին միացած **հաճախորդների համար նախատեսված** «ՃԱՄՓՈՐԴԻՐ ԱՄԻՕ ԲԱՆԿ ՓԲԸ-Ի ՀԵՏ» **ակցիայի պայմաններ**

1. **Հասկացություններ և ակցիայի նկարագրություն.**
   Բանկ - «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ:
   Ակցիա - «ԱՄԻՕ Բանկ» ՓԲԸ-ի կողմից իրականացվող ակցիա:
   Ակցիայի գործողության ժամկետ - 22.07.2026 – 30.09.2026 թթ.
   Քարտ – AMIO Pro փաթեթի շրջանակում թողարկված Visa Platinum կամ Mastercard World վճարային քարտ (քարտերը թողարկվում են ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար, եվրո և ռուբլի արժույթներով):
   Ակցիայի մասնակից - AMIO Pro փաթեթ ունեցող կամ ակցիայի շրջանակում AMIO Pro փաթեթին միացած ՀՀ ռեզիդենտ ֆիզիկական անձ:
   Հետվճար (Cashback) – Կատարված գործարքի դիմաց ստացված հետվճար:
   Գումարի վերադարձ – Անավարտ կամ չեղարկված գործարքի դեպքում գումարի վերադարձ ակցիայի մասնակցին:
   Հաշվանցված գործարք – Քարտով կատարված և Բանկի կողմից հաստատված գործարք:
   Անկանխիկ գործարք – Անկանխիկ գործարք են համարվում բոլոր POS/VPOS, Apple Pay, Google Pay գնումները, արտասահմանյան սպասարկման կետերում և արտասահմանյան կայքերում կատարված գործարքները, ինչպես նաև ավիաուղիների կայքերից տոմսերի ձեռքբերման համար կատարված (MCCs 3000- 3350,4511) գործարքները:
   MCC (Merchant Category Code) - Վաճառողի կամ ծառայություն մատուցողի գործունեության տեսակը նկարագրող կոդ է, որն օգտագործվում է գործարքները դասակարգելու համար:
2. **Ակցիայի պայմաններ.**
   1.1 Ակցիայի շրջանակում Visa Platinum, Mastercard World քարտերով արտասահմանյան սպասարկման կետերի և արտասահմանյան կայքերի միջոցով գործարքների կատարման, ինչպես նաև ավիաուղիների կայքերից տոմսերի ձեռքբերման համար (MCCs 3000- 3350,4511) ակցիայի մասնակիցը կստանա ամսական 20% հետվճար, բայց ոչ ավելի քան ամսական 20,000 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ: Փաստացի վճարվող հետվճարից նվազեցվելու է 20% եկամտային հարկ:

1.2 Վճարվող ամսական Cashback-ի նվազագույն գումար՝ 500 ՀՀ դրամ կամ դրան համարժեք արտարժույթ: (Cashback չի վճարվում, եթե վերջինիս գումարը փոքր է նվազագույն գումարից):

- Ակցիայի ընթացքում արտարժութային քարտերով կատարված գործարքների՝ Ակցիայի պայմաններին համապատասխանությունը ստուգելու նպատակով, գործարքների գումարի փոխարկումը ՀՀ դրամի իրականացվելու է հիմք ընդունելով ամսվա վերջին օրվա դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված համապատասխան արժույթի փոխարժեքը ՀՀ դրամի նկատմամբ: Իսկ Cashback-ի գումարը քարտին հաշվեգրվելու է Բանկի կողմից վերադարձի օրվա դրությամբ հայտարարված համապատասխան արժույթի՝ ՀՀ դրամի նկատմամբ անկանխիկ վաճառքի փոխարժեքով:
- Cashback չի տրամադրվի հետևյալ դեպքերում՝

- կատարված գործարքները չեղարկվել են,
- կատարված գործարքները չեն գերազանցել Cashback-ի նվազագույն գումարը,
- քարտը/քարտերը, որոնցով կատարվել են վճարումները, Cashback-ի տրամադրման պահին փակված կամ քարտի գործողության ժամկետի ավարտմամբ վերաթողարկված չեն,
- գործարքներ, որոնք կատարվել են՝
- խաղադրույքների կատարման հարթակներում,
- կրիպտոակտիվների առևտրային հարթակներում և ինտերնետային կայքերում,
- Բանկի հանդեպ ժամկետանց պարտավորություն ունեցող և/կամ սև ցուցակում գտնվող հաճախորդներին,
- Բանկի աշխատակիցներին:

- Cashback վճարվում է յուրաքանչյուր ամսվա մինչև 25-ը՝ նախորդ ամսվա հաշվանցված գործարքների համար: Ակցիայի վերջին ամսվա հետվճարի հաշվարկում կներառվեն նաև այն գործարքները, որոնք կհաշվառվեն մինչև հաջորդող ամսվա 16-ը:
- Բանկի կողմից հայտարարված Ակցիայի իրականացումը կարող է հետաձգվել անորոշ ժամկետով, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության արդյունք, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը կամ խափանումը, պետական մարմինների ակտերը և այլն: Անհաղթահարելի ուժի (արտակարգ և անկանխելի հանգամանքների) ազդեցության հետևանքով Բանկը ողջամիտ ժամկետում Բանկի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է սույն Ակցիայի իրականացման հետաձգման վերաբերյալ: